

Վիճակն 10 յուլիս .
Առաջինը կատարված թվերը , որպես զի
հարաատուր վերջին կտրվածներն մեջ վեր-
առադրելով Թուրք զորականներն ուրիշ տեղ
փոխադրելու համար Գլխի նախահան-
գիստին անցունել :

Պեղքել 10 յուլիս .
Կարողութիւնն ընդհանուր կարծ-
եաց զիջանելով իւր զօրքը պաշտպանու-
ղական վիճակի մէջ պիտի բռնէ :

Պէշկապատ 10 յուլիս .
Ազգային ժողովոյ այս առաջին նիստը
մերկայաց եղաւ , և պահպանողականը
հրաժարական տուին :

Փարիզ 11 յուլիս .
Սերվիլոյ կատարված թվերն Փարիզին
12 միլիոն ֆրանքի փոխառութիւն մ'ընե-
լու գործն ի դերն ելաւ :

Սերվիլոյ գործակատարը Լոնտոն դնաց:
Լոնտոն 11 յուլիս .

Օսմ. Գոնս.	8 3/4
Փոսմ.	1865 9
•	1869 8 3/4
•	1871 35
•	1872 15 1/2
•	1873 8 3/4
•	Եղիպատ 41 1/4
Անգլ. Գոնս.	94 11/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանը Պաշայի աստի-
ճան շնորհեց Ալթունիզատէ իսմա-
յիլ պէյին ի վարձատրութիւն անոր
հայրենատիրութեան , սրով երեք
վաշտ կամար զինուորեց իւր ծա-
խիւք :

Երեքշաբթի օրը նախարարաց
արտաքոյ կարգի խորհուրդ գումա-
րեցու Սոլաիմպաշի դուռն ընդ նա-
խագահութեամբ Մեհմեդ Սուլթան
խօսք կար թէ Վեհ. Սուլթանն ան-
ձամբ պիտի երթար նախագահէր
խորհրդին , և այս պատճառաւ պա-
րտաւորութիւնք ալ եղած էին , բայց
ն. Կ. Վի հափտութիւնը չգնաց :

Մայրաքաղաքի անգղիական դես-
պանն այս իրիկուն և Գերմանական
դեսպանն ալ վաղ իշիկուն կոչունք
պիտի տան Բ. Գրան նախարարաց :

Մայրաքաղաքի դեսպանատու-
ներէն ռուսաց ստացած հեռագրաւու-
րերէն կրմացութեան թէ Ռուսերը Կարսի
մօտ 40000 զօրաց բանակ մը թողով
մնացեալներն Ալեքսանդրաքոյ քաղ-
աքին են :

Եւրոպական լրագրաց մէջ հրա-
տարակեալ տեղեկութեանց նայելով
Ռուսաց կողմանեան բանակին կո-
րուստը 20000 կը հասնի :

Վիեննայէն Լա թիւրքի ուղղեալ
հեռագիր մը կրէ թէ Ռուսիոյ կայս-
րըն Ասիոյ պատերազմին անյաջողու-
թեան վրայ դժգոհութիւն յայտնե-
ր է Միխայիլ մեծ դուքսին , և թէ Լո-
րիս Մէլիքովին տեղ աւելի յայտնակ
զօրապետ մը գնելու որոշումեղեր է :

Թաքվիմի վաղայի պաշտօնական
լրագիրը կայսերական բանակներուն
մէջ ծառայող Հայ կամաւորաց թիւն
32-800 կը հասցնէ հետեւեալ հաշուով .
Կարինէն ու շրջականներէն 2000
Խարբերդէն » 200
Ատանայէն , Մարաշէն և այլն 500
Չէլսեքըններուն մէջ 100
Փոխադրական աշխատութեանց 30000

Երեքշաբթի օրը զրոյց մ'եղաւ
մայրաքաղաքի մէջ թէ պատերազ-
մական գործոց նախարար Բէտիֆ
փաշան յանկարծակի մեռեր է ի
Շումնու , բայց այս ցաւալի լուրը բա-
րեքաղաքար հաստատուեցաւ պաշ-
տօնական կերպով :

Մայրաքաղաքի թուրք լրագրաց

մէջ հրատարակեալ պաշտօնական աղ-
մը կը ծանուցանէ թէ կայսերական
կառավարութիւնն որոշեց վեց վաշտ
կամաւոր զօրական գրել մայրաքա-
ղաքի բնակիչներէն , առանց ազգի
և կրօնի խտրութեան , և այս գոր-
ծըն յանձնեց օտարկանութեան նա-
խարարին , որ մայրաքաղաքի վեց
գլխաւոր թաղերուն մէջ գրառեա-
եալներ բանալով , տուեալներ դը-
րաւ , որպէս զի ուղղուն երթայ գըր-
ուի :

Կայսերական կառավարութիւնն
համազգեստ և զէնք պիտի տայ զին-
ւորագրելոց , և Կ. Պոլիս կեցած ժա-
մանակին օրը 300 տարւ հաց և 40 փրյ
պիտի տայ իւրաքանչիւրին . իսկ պա-
տերազմին ասպարէզը հասած ժա-
մանակին կանոնաւոր զօրաց , յա-
կացեալ թոշակն ու նպարը պիտի ըն-
դունին :

Ով որ 50 կամաւոր գրել տայ ,
յիսնասպետի (միւլազիմ) աստիճան
պիտի ստանայ , 100 կամաւոր գըր-
նողն հարիւրասպետի աստիճան , 200
էն աւելի գտնողը տեղակալի (գօլ
ազասի) աստիճան և 5000 էն աւելի
գտնողն ալ հազարասպետի աստիճան
պիտի ստանայ :

Հիւանդացող կամ վերաւորեալ
կամաւորք զինուորական հիւանդա-
նոցաց մէջ պիտի դարձանուն , և ա-
մենն ալ իրաւունք պիտի ունենան
Օսմանիէի Մէհմետիէի և իֆթիսարի
պատուանշաններ ստանալու :

Այս վեց վաշտերը Մալմէի Բա-
ղաբէքը պիտի կոչունին :

Ի նպատակ պատերազմական ծա-
խուց ընդհանուր հանգանակութիւն
մը բանալու համար կանոնադրու-
թիւն մը հրատարակուեցաւ , յորմէ
կը տեսնուի թէ մայրաքաղաքի և
գաւառացի մէջ յատուկ մասնախոր-
հուրդներ պիտի կազմուին հաւատա-
րիմ անձերէ , որք մինչև 40 փրյ մա-
սական հանգանակութիւն պիտի հա-
ւաքեն մինչև պատերազմին վերջը :

Կ. Պոլիս քաղաքը դատ վիլայէթ
մը նկատուելով , 18 Սանճաքի պիտի
բաժնուի և ամեն մէկ թաղերու և
գիւղերու մէջ մէկ մէկ մասնախոր-
հուրդ պիտի կազմուին , որք առանց
սեռի և ազգի խտրութեան բոլոր բը-
նակիչներն ի ստորագրութիւն պիտի
հրաւիրեն և անոց կամաւոր հան-
գանակութիւնն ընդունին առանց
որ և է ստիպման :

Հանգանակութեան դրամաց ճշգիւ
արձանագրութեան , անխորհուրդ պահ-
պանութեան և սահմանեալ նպատա-
կէն դատ ուրիշ բանի չգործածուե-
լուն համար՝ ամեն պէտք եղած ա-
պահովութեան միջոցները ձեռք առ-
նուած են վերոյիշեալ կանոնադրու-
թեան մէջ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍՉԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՆԷ

29 յունիս , չորեքշաբթի իրիկուն	
30 յունիս , հինգշաբթի առաւում	
բացուեցաւ	9,25
ժամ 6 րոն	9,26
Բուռն իր երկարութիւն	Ֆր. 26
Թղթադրամ	Լիր. 177 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Կ. Պոլիս 29 Յունիս	
Ստիւթէ Դէնէրալի բաժ. Անգլ. Լիր. 3,	
• փոխանակութեան	1,20
Կ. Պոլիս Պանքային	2,25
Քրէտի Դէնէրալ	2,
Քրէտի Օսթրո-Թուրք	—
Փոսմ. 1863	Ֆր. 50
• 1865	• 51
• 1869	• 47
• 1872	• 46
• 1873	• 45
Թրամուայ	Օսմ. Լիր. 1 17

ԸՆԹԱՅՔ ԿՐԱՄՈՅ

29 Յունիս

Անգլ. Լիր.	492.	109 30
Նարուոն ոսկի	•	87 32
Խմէնիալ Ռուս	•	9 20
Գըրմից	•	54 20
Հինգ ֆրանք	•	—
Հինգ նոց	•	116
Պրինձ	•	176 20

ԱԶԳԱՅԻՆ

ՀՐԱՆԻՐ ԱՌԱՋԱՅԻՆ ԵՐԵՍԺՈՒՍՈՍ

Ազգային ժողովը նիստ ունի յա-
ռաջիկայ ուրբաթ յուլիս 1 ի Մայր
եկեղեցի Գումբարու :

Ատենը պիտի բացուի ճիշդ ժամ
7 ին և դոյսուր 10 ին :

Հրաւիրեալ են Երեսփոխան Է-
ֆէնտինեռն , իրենց ազգասիրական
պարտականութիւնը կատարելու փու-
թալ :

27 յունիս 1877

Ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պոլիս

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍՈՅ
ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ

ՕՐԱՄԱՐԳ

1. Ընտրութիւն Գաղ. ժողովոյ Ազգ.
վարչութեան :

2. Խնդիր Ազգ. Դատարարակու-
թեան : Երկրորդ ընթերցումն
տեղեկագրոյ Դատարարակու-
թեան դիւանի :

Ատենադպիր

Հ. Ս. Աւահեան

Օրթագրել 29 յունիս 1877

Տէր Խաղաղապետ Մասիսի .

Շնորհակալ կըլլամ Ձեզ եթէ հե-
տեւայը Ձեր թերթին մէջ հրատա-
րակել բարեհաճիք :

Ընդունեցէք Տէր, մեծարանքներու
Արքեպ. Արքեպեան

17 տարի է յորմէ հետէ մեր երես-
փոխանական ժողովը ազգային վար-
չութեան մարմինները կընտրէ , ուս-
կայն 17 տարի է չէր հանդիպած և
թերեւ շատ երկար տատն չհանդի-
պի այնպիսի օր մը , յորում Ազգ.
ժողովոյ ընտրութիւնն այնքան կա-
րևորութիւն ունենայ , յորում ան-
ձիւր երեսփոխան այնքան պարտա-
ւոր ըլլայ խղճիւ և խորհելով իւր
քուէն տալու՝ ինչպէս այսօր :

Պատմութիւնը քիչ անգամ ար-
ձանագրեր է նմանը այն օրերուն յո-
րըս կապրիմք . այս մեծ յուզման ,
այս մեծ ոտանման առարկայն , պա-
տըրուակը , մեք արեւելքի ժողովուրդ-
ներու մէք : Բայց ճշմարտութեան
վախճանին , և ինչ որ ալ ըլլայ՝ ոչ
շատ ուշ իր լուծումը պիտի գտնէ :

Դժուար պարագայներ , դժուար
կացութիւն և Եւ ինչ պիտի ըլլայ մեր
ընթացքը . ինչ պիտի ըլլայ Հայոց
քաղաքականութիւնը : Ծանր խնդ-
րիւններ , Սակայն ո՛րչափ ալ ծանր
ըլլան՝ հարկ է լուծել , Եւ մեք՝ որ
դեռ երէկ ո՛ւն է քաղաքական մտա-
ծութենէ հեռի բոլոր մեր ուշադ-
րութիւնն առաջնորդաց վէճերու
վրայ դարձուցեր էինք , յանկարծ
քաղաքական յորձանքներու մէջ նե-
ռեցանք , որպիսի՝ փորձ , որպիսի՝ ճոր-
պիկ նաւուղիներու կարօտ ենք :

Այս միջոցիս ո՛րչափ մեծ կարե-
ւորութիւն ունի մեր ազգային վար-
չութիւնը . հետեւեալ ի՛նչպէս ար-
ժանաւոր անձերէ կազմուած պէտք
է ըլլայ , Բարեբաղդութիւն մ'է որ
ազգային իշխանութեան ղեկը պա-
րագայից յարմար ձեռաց մէջն են :

Երբ տեղեկացանք թէ առեւա-
պետաց ժողովը արամագիր է Բա-
ղաքական ժողովոյ ընտրելեաց ցան .

կին մէջ արտաքոյ խորհրդարանի ա-
նուններ դառնել , ճշմարտագոհութիւն
մը զգացինք , ժողովոյն այդ իմաս-
տուն տարածարութիւնն ազգայոց
մ'էր թէ ո՛րչափ վերահասու է նա
իւր պաշտօնին ծանրութեան :

Չտարակուսեցանք թէ պիտի եր-
թայ որոնէ ամեն ուրեք , ուր պա-
րագայից յարմար Հայ մը գտնէ , որ
թէ և ազգային ժողովոյ անդամակից
չէ , այլ իրական արժանիք ունի ազ-
գային վարչութեան մասնակցելու :
Ժողովին այդ որոշումը կապահովցնէր
զմեղ թէ շատ լրջօրէն խորհրդարա-
նի անուոց մէջէն իւր ընտրութիւն-
ները պիտի ընէ : Այդքան խնամք ,
այդքան դուրսդուրով պատրաս-
տուած ընտրելիներէ ընտրեալ Բա-
ղաքական ժողով մը , ո՛րչափ ընտիր
և ազգին համարմանը ո՛րչափ ար-
ժանի ըլլալուն ո՛վ կրնար երկրպիւղ :
Ատենապետաց այդ ցանկը տեսանք ,
և ուրախ եմք որ մեծաւ մասամբ
ազգին անկեղծութեանց համապա-
տասխանած է :

Ինչ պիտի ընէ երեսփոխանական
ժողովը , պիտի հետեւի՝ առեւապե-
տաց ժողովին քաղաքականութեանը ,
կամ թէ անոնցմէ աւելի իմաստուն
ընթացք մը պիտի բռնէ , Համազ-
ւած է թէ ազգին ամենէն փորձ ,
ճարտար և պատկառելի զլիսոց հարկ
է յանձնել մեր գործոց հողածու-
թիւնը , և թէ՛ մեր Գաղաքական ժո-
ղովը ամեն ժամանակէ աւելի այս
միջոցիս ազգին համարումը վայելե-
լու արժանի պարտի ըլլալ :

Շատերը մի երկիւղ ունին՝ զոր
բոլորովին անհիմն չեմք գտնել , թէ
մի գուցէ անբացատրելի սխալմամբ
մը կամ անհոգութեամբ մը երեսփո-
խանական ժողովը զուտ կամքամե-
ստուար մեծամասնութեամբ ձախա-
կողման Գաղաքական ժողով մը մեզ
պարգևեալու գ. ժողովութիւնն ու-
նենայ :

Ձախակողման Գաղ. ժողով մը
ինչ ընդունելութիւն պիտի գտնէ
ազգէն , մինչև ո՛ր աստիճան ազգին
համարումը պիտի վայելէ :

Ձախակողմ ըսելով ազգը փափագ-
եան էֆէնտի և ընկերք կըմբռնէ :
Ուղիւ է՝ ազգին այս համոզումը ,
չեմք գիտնել , սխալ է , չեմք գիտնել ,
միայն սա գիտնելով թէ ազգը այս
համոզումը ունի , և հասարակաց կար-
ծիքը գրգռեալ է նոցա դէմ :

Ազգը գիտէ նաեւ թէ փափագ-
եան էֆէնտի և ընկերք մեծ եռանդ-
ունին զազգը կառավարելու , ան-
շուշտ խղճիւ համոզուած լինելով թէ
իրենք միայն զնա փրկելու կարող
են : Ունին իրաւունք այսպէս մտա-
ծելու , թերեւ ունին . կրնամք պա-
խարակել զանոնք իրենց այս պա-
հանջման համար .—Երբեք : Մեք ալ
կուզենք հաւատալ թէ փափագեան
և ընկերք կը սիրեն իրենց ազգը , զի
չեմք կրնար ըսել թէ ազգասիրու-
թիւնը մի կուսակցութեան սեփհա-
կանութիւնն է : Բայց ինչ օգուտ ,
ազգը իրենց համամիտ չէ և ազգին
ներքին իրենցմէ տարբեր կարծիք
մ'ունենալ այս մասին : Թերեւ օր
մ'ազգային կարծիքն իրենց նպաս-
տաւոր ըլլայ , բայց այսօր իրենց դէմ
է : Իրողութիւն մ'է . այս զոր կը հաս-
տատմք առանց ազգին այս զգաց-
ման ո՛րչափ արգարացի ըլլալը քնն-
նելու :

Ձախակողման Գաղ. ժողով մը ,
յորում իսկ մը անձանթ անուններ
գտնուին , կարծեմ պիտի տայ թէ ազ-

